

— Ո՛վ գիտե, կարելի է հանէին, եւ ես չեմ ուզեր կախաղանի վրայ մեռնիք

Կինը այս մարդուն տրամաբանութեան տեսնելով թէ չի կրնար յաղթել, սկսաւ լալ, ձեռքերը կուրծքին զարնել, ողբալ իւր բախտին վրայ. իսկ մարդը անշարժ եւ տխուր կը մտածէր: Վերջապէս կինը իբրեւ գիւտ մ'ըրած՝ յանկարծ արցունքները սրբեց, որ արդէն իր սիրելի ամուսնոյն սիրտն ի գութ շարժելու համար կը քամեր յարմար միջոցներու, եւ ըսաւ.

— Բայց համարի՞նք թէ մէկը քեզ բռնութիւն ընէ, գքեզ կապէ, թան լիքներդ գրպանեդ առնու եւ յիսուն ոսկին էլ դարձեալ տա, եւ այս հայ իշխանն ազատէ, դու այս բանին ի՞նչ ունիս հակառակելու:

— Այդ ըսածդ...— ըսաւ մարդը ծանր-ծանր մտածելով,— կարելի բան է, վասնզի ես ՚այն ատեն բռնի պարտաւորեալ կ'երեւամ Դավրեժի ամիրային առջեւ. այդ այդ անկարելի չէ, բայց այն ժամանակ պէտք է որ հայ իշխանին մարդիկը ութ-տասն հոգի գոնէ լինին եւ որ մեր պահապանաց թուին հաւասարի:

— Այդ բանին համար էլ հոգ մ'ըներ, արդէն ժամանակը հեռու չէ եւ մուրը պատեց, նոքա տասներկու թիավար նաւակով մը կ'ուզան. ես հիմա պահապանաց մէկ երկուքը կը հեռացնեմ մօտակայ արուարձանն ուղարկելով, քեզ էլ լաւ մը կապել կ'ուտամ, յիսուն ոսկին դու կառնուս, ես է՛լ...

Այստեղ կինը՝ իւր դիւական գեղեցիկ աչքերը փայլեցնելով եւ քովստի երկանը նայելով զուարթ ծիծաղով դադրեցաւ խօսելէն:

— Ի՞նչ,— ըսաւ մարդը,— քե՞զ էլ բան կայ, գրուցէ՛:

— Այո, ինձ էլ գեղեցիկ ադամանդեայ մանեակ մը կայ: Է՛լ մի խօսիր դու, տեղացդ մի շարժիր, ես ամէն բան կը կարգադրեմ:— Եւ դեպի դուռը երկնցաւ: